



ՍՐ. ԳԷՈՐԳ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ST KEVORK ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OREGON

Յունուար 4, 2010

Սիրելի անդամներ եւ խնամակալներ Սր. Գեորգ Եկեղեցւոյ,

Շնորհակալութիւն կը յայտնենք ձեր նուիրումին եւ պատասխանատուութեան գիտակցութեան համար: Ձեր օգնութեան շնորհիւ է, որ կը պահենք Հայկական Եկեղեցին, ուր հաւաքուելով կը հաղորդուինք Աստուծոյ հետ եւ վառ կը պահենք մեր ժողովուրդի հոգեւոր մշակոյթը:

Կը յիշեցնենք ձեզի որ տարեկան ընտանեկան անդամատուրքը 50 տոլար է եւ 35 տոլար անհատ, **եթէ տակաւին չէք վճառած՝ հաճեցէք վճառել: Անդամակցութիւնը անհրաժեշտ է որպէսզի եկեղեցին կարողանայ գոյատեւել եւ իր առաքելութեան ծառայել:** Ձեր անդամակցութեան, ներկայութեան եւ կամատուր աշխատանքին շնորհիւ եկեղեցին կը դառնայ օրհնաբեր ներկայութիւն մը ձեր ընտանիքներուն կեանքէն ներս:

Ո՞րոնք են խնամակալները եւ ո՞րոնք են անդամները:

Խնամակալները այն անդամներն են, որոնք իրենց տարեկան անդամատուրքէն շատ աւելի կը վճառեն: Իսկ անդամները տարեկան 50 եւ կամ 35 տոլար միայն անդամատուրքը վճառողներն են: Խնամակալները եւ անդամները կը կազմեն այն Խնամակալական Մարմինը, որ կը հոգայ եկեղեցւոյ ծախսերուն մեծագոյն մասը:

Ինչու՞ համար խնամակալ կամ անդամ պէտք է ըլլաք:

Որովհետեւ կը գիտակցիք Հայ Եկեղեցւոյ կարեւորութեան ու առաքելութեան, եւ կուզէք որ ան իր գոյութիւնը շարունակէ ձեզի համար: Ձեր այս քայլով դուք իրաւունք կ'ունենաք մասնակցելու եկեղեցւոյ վերաբերեալ որոշումներու կայացման եւ տարեկան Ծխական Ընդհանուր Ժողովի քուէարկութեան:

Անգլերէն բաժնին մէջ կը գտնէք 2010 տարուայ Անդամակցութեան կամ Խնամակալութեան Խոստմնագիրը: Հաճեցէք լեցնել եւ ուղարկել գայն, եւ կամ տալ Ծխական Խորհուրդի անդամներէն մէկուն:

Յարգանքներով՝

Սր. Գեորգ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդ

Ani Ranian, Parish Council Chairperson , (503) 655-4400 Cell (503) 789-6985
Deacon Kevork Parseghian, (503)291-1270. Cell: (503)319-1112
9215 SE Church St. Clackamas, OR 97015
www.oregonarmenians.com